ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 225

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Փարպի բնակավայրի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Փարպի բնակավայրի մասով) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

| Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 02-110-0140-0037 կադաստրային ծածկագրով 0.9997 հա մակերեսով հողամասից 0.3512 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող | 02-110-0140-0037 կադաստրային ծածկագրով 0.9997 հա մակերեսով հողամասից 0.3512 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Փարպի բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Փարպի բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ե. Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ.Դավթյան |

Երևան, «31» «մայիսի» 2024թ.